ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-23/2

ք.Երևան «20» հունվար 2023թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Կարապետյանի, որը գործում է «ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Մարգարա» մաքսային կետի կառուցման (1-ին փուլ) աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում՝ սկսվում և իրականացվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանն այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **250 621 128 (Երկու հարյուր հիսուն միլիոն վեց հարյուր քսանմեկ հազար մեկ հարյուր քսաներեք)** ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները:

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական ռեսուրսի անհրաժեշտ է կենցաղային սպասարկման շինությունների չնախատեսում	ՎԻՎՕ-ի 157[8] հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված
2	կանաչապատ տարածքներում չեն իրականացվել պահպանման ենթակա տնկիների, ծառերի, թփերի, բույսերի և բուսական գրունտի առանձնացում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության չեն իրականացվել ծառերի և թփերի տեղափոխում	ՎԻՎՕ-ի 157[8] հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված
3	Շինարարության համար նախատեսված տարածքում չեն իրականացվել բուսական ծածկույթի (ծառերի, թփերի, բույսերի և այլն) բների հանում, մաքրում, տարածքում առկա և պահպանման ոչ ենթակա բուսական շերտի առանձնացում արմատներից, տարածքի մաքրում ծառերի բներից և թփերից	ՎԻՎՕ-ի 157[8] հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված
4	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի առողջության ապահովման, ինչպես նաև շրջակա միջավայրի համար չեն ստեղծվել անվտանգ ու սանիտարահիգիենիկ պայմաններ, չեն տրամադրվել անհատական պաշտպանական միջոցներ (հատուկ արտահագուստ, սաղավարտ, կոշիկ և այլն), չի իրականացվել աշխատակիցների հրահանգավորում՝ անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ :	ՎԻՎՕ-ի 157[8] հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված
5	չի լրացվել աշխատանքների վարման մատյան, չի կազմել ծածկված աշխատանքների փաստագրման, կարևոր կոնստրուկցիաների ընդունման միջանկյալ (սարքավորումների, համակարգերի, ցանցերի) ու փորձարկման ակտեր	ՎԻՎՕ-ի 157[8] հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված
6	Շինարարական աշխատանքների ողջ ընթացքում չեն պահպանվել օդի փոշոտվածության և գազոտվածության կանխարգելման պահանջները	ՎԻՎՕ-ի 157[8] հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 2.1, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030526
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ
ք. Երևան, Արցախի պողոտա 55
«Արմսվիսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2500010982360100
ՀՎՀՀ 00403814
«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ-ի տնօրեն՝

Ա.Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ

«20» հունվարի 2023թ. Հավելված թիվ 1
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«ՄԱՐԳԱՐԱ» ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (1-ԻՆ ՓՈՒԼ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

<<Մարգարա>> մաքսային կետի կառուցման (1-ին փուլ) աշխատանքները կատարել՝ համաձայն կից ներկայացվող ծավալաթերթ-նախահաշիվների և նախագծանախահաշվային փաստաթղթերի: Օբյեկտի նախապատրաստումը պետք է նախատեսի ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից նախագծային փաստաթղթերի (ներառյալ գոյություն ունեցող օբյեկտի վերակառուցման դեպքում կոնստրուկցիաների տեխնիկական հետազննության արդյունքների փաստաթղթերի) ուսումնասիրություն, շինարարության պայմաններին մանրազննին ծանոթություն, արտահրապարակային ու ներհրապարակային նախապատրաստական աշխատանքներ, շենքերի, շինությունների և նրանց մասերի կառուցման, ինչպես նաև անմիջական նախապատրաստական փուլի աշխատանքների իրականացման նախագծերի մշակում՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի անվտանգության պահանջները:

Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական ռեսուրսի՝ անձնակազմի համար անհրաժեշտ է նախատեսել կենցաղային սպասարկման շինություններ (օրինակ՝ սանհանգույց, բուժկետ, հանգստի սենքեր և այլն), կանաչապատ տարածքներում իրականացվում է պահպանման ենթակա տնկիների, ծառերի, թփերի, բույսերի և բուսական գրունտի առանձնացում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ծառերի և թփերի տեղափոխում այլ տարածքներ՝ դրանցում կանաչապատում ապահովելու նպատակով, շինարարության համար նախատեսված տարածքում իրականացվում է բուսական ծածկույթի (ծառերի, թփերի, բույսերի և այլն) բների հանում, մաքրում, տարածքում առկա և պահպանման ոչ ենթակա բուսական շերտի առանձնացում արմատներից, տարածքի մաքրում ծառերի բներից և թփերից,

ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա կանաչ տնկիները անհրաժեշտ է ցանկապատել (ցանցապատել), շինարարական հրապարակի տարածքում առանձին կանգնած ծառերի բները պաշտպանել վնասվածքներից՝ փաթեթավորելով ատաղձափայտով: Առանձին կանգնած թփերն անհրաժեշտ է վերատնկել: Կանաչապատման համար պիտանի ծառերն ու թփերը պետք է վերատնկվեն դրանց համար նախատեսված հատուկ պահպանական գոտում:

ծառաթփուտային (ծառաթփային) բուսականության հատումը և արմատների վզիկների և աճող ծառերի բների հողալցումն անհրաժեշտ է իրականացնել միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում: Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի առողջության ապահովման, ինչպես նաև շրջակա միջավայրի համար պետք է ստեղծվեն անվտանգ ու սանիտարահիգիենիկ պայմաններ, տրամադրվեն անհատական պաշտպանական միջոցներ (հատուկ արտահագուստ, սաղավարտ, կոշիկ և այլն), պետք է իրականացվի աշխատակիցների հրահանգավորում՝ անվտագության տեխնիկայի կանոնների վերաբերյալ : Անհրաժեշտ է լրացնել աշխատանքների վարման մատյան, կազմել ծածկված աշխատանքների փաստագրման, կարևոր կոնստրուկցիաների ընդունման միջանկյալ (սարքավորումների, համակարգերի, ցանցերի) ու փորձարկման ակտեր, անհրաժեշտության դեպքում ձևակերպել այլ շինարարական նորմերով և կանոններով նախատեսված լրացուցիչ կատարողական փաստաթղթեր:

Շինարարական աշխատանքների ողջ ընթացքում՝ պետք է պահպանվեն օդի փոշոտվածության և գազոտվածության կանխարգելման պահանջները: Փոշու արտանետումների կանխարգելման համար շինությունները պետք է առանձնացվեն արտաքին միջավայրից ամբողջ բարձրությամբ անթափանց թաղանթով, չոր եղանակային պայմաններում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար պետք է խոնավեցվի ջրի շիթով, հրապարակը պետք է համալրվի հողման աշխատանքների արդյունքում գոյացած փոշու արտանետումները բացառող սարքերով, տեխնոլոգիաներով, շինարարական նյութերը՝ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պետք է պահվեն կամ պահեստավորվեն փակ տարածքներում, ծածկվեն անթափանց թաղանթով, շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը պետք լվացվեն ջրի շիթով: Տարածքի միկրոկլիմայի բավարար պահանջների ապահովման համար բարեկարգման տարրերի և միջոցառումների ընտրությունը անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով աշխարհագրական դիրքը, տվյալ քաղաքաշինական միջավայրի կառուցապատման և հատակագծման առանձնահատկությունները, կլիմայական պայմանները, բարեկարգվող տարածքի գործառական նշանակությունը, կլիմայի փոփոխության անբարենպաստ հետևանքների ազդեցությունը և կանխարգելիչ միջոցառումների ապահովման պարտադիր պահանջը:

NN	*Աշխատանքների անվանումը*	*չ/մ*	*ծավալը*	*Միավորի արժեքը /ՀՀ դրամ/*	*Ընդամենը /ՀՀ դրամ/*
1	2	3	4	5	6
	Բաժին 1 Տարածքի ուղղաձիգ հարթեցում				
1	Գրունտի /հողաբուսական շերտ/ մշակում 0,65 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	3.707	523811	1,941,768
2	Գրունտի տեղափոխում լցակույտ 1 կմ	տ	5189.80	260	1,348,236
3	IV կարգի գրունտի մշակում հանույթում 0,65 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.764	860951	657,766
4	Գրունտի տեղափոխում լցակույտ 1 կմ	տ	1222.400	260	317,562
5	Ճանապարհի հողային պաստառի հարթեցում լիցքում՝ գրեյդերով	100մ2	30.720	1853	56,932
6	Ճանապարհի հողային պաստառի հարթեցում հանույթում՝ գրեյդերով	100մ2	21.180	1853	39,252
7	Ավազակոպճային հարթեցնող շերտի իրականացում	մ3	6800.00	7801	53,044,948
8	Ավազակոպճային հարթեցնող շերտ հմիջ=10սմ	մ3	550.000	7801	4,290,400
9	Խճե միաշերտ հիմնատակի իրականացում 16սմ հաստությամբ	100մ2	51.9	179140	9,297,345
10	Բիտումի տարածում խճաշերտի վրա 4.12տ/1000մ2	տ	21	260788	5,576,368
11	Խոշորահատիկ ասֆալտբետոն h=6սմ	100մ2	51.900	590641	30,654,251
12	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ" տիպ h=4սմ	100մ2	51.90	413802	21,476,347
13	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	100մ	2.340	1173110	2,745,078
	Ընդամենը 1բաժնով				**131,446,254**
	Բաժին 2 Կոնստրուկտորական աշխատանքներ				
15	Գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.090	655892	59,030

16	Գրունտի տեղափոխում լցակույտ 1.0կմ	տ	175.50	260	45,592
	ՁՆՆՄԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ				
17	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից	մ3	90.000	40123	3,611,104
18	Միաձույլ ե/բ հիմքեր իրականացում B25 դասի բետոնից	մ3	221.7000	61065	13,538,133
19	Ամրան Ø16 A500C դասի	տ	31.0144	492236	15,266,375
20	Ամրան Ø10 Ac-I դասի	տ	2.382	492236	1,172,405
21	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	1.2586	504543	635,036
22	բետոնե պատի իրականացում B25 դասի	մ3	16.00	86365	1,381,847
	ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՁՆՆՄԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ				
23	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից	մ3	12.100	40123	485,493
24	Միաձույլ ե/բ հիմքեր իրականացում B25 դասի բետոնից	մ3	29.0000	61065	1,770,888
25	Ամրան Ø16 A500C դասի	տ	4.086	492236	2,011,186
26	Ամրան Ø10 Ac-I դասի	տ	0.316	504543	159,280
27	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	0.1650	504543	83,275
28	Ներդիրների դետալներ (Նդ-1) (10 հատ)	տ	0.1410	1631120	229,988
29	բետոնե պատի իրականացում B25 դասի	մ3	3.6000	86365	310,916
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ				
30	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից	մ3	10.500	40123	421,295
31	Միաձույլ ե/բ հիմքեր իրականացում B25 դասի բետոնից	մ3	25.0000	61065	1,526,628
32	Ամրան Ø16 A500C դասի	տ	3.5337	492236	1,739,404
33	Ամրան Ø10 Ac-I դասի	տ	0.2687	504543	135,555
34	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	0.142	504543	71,634
35	բետոնե պատի իրականացում B25 դասի	մ3	3.60	86365	310,916
36	Ներդիրների դետալներ (Նդ-1) (10 հատ)	տ	0.1410	1631120	229,988
	Մոդուլների տակի հիմք				
37	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից	մ3	15	40123	601,851
38	Միաձույլ ե/բ հիմքեր իրականացում B25 դասի բետոնից	մ3	37.00	61065	2,259,409
39	Ամրան Ø16 A500C դասի	տ	5.23	492236	2,574,318
40	Ամրան Ø10 Ac-I դասի	տ	0.3976	504543	200,622
	Ամրան Ø8 Ac-I դասի	տ	0.2101	504543	106,018
41	բետոնե պատի իրականացում B25 դասի	մ3	3.6000	86365	310,916
42	Ներդիրների դետալներ (Նդ-1) (10 հատ)	տ	0.141	1631120	229,988
	Ընդամենը 2 բաժնով				**51,479,089**

	Բաժին 3 Էլեկտրատեխնիկական մաս				
43	Տրանսֆորմատորային ենթակայանի (ԼՏԵ ((КТП) 250կՎ) մալուխային մուտքով և 0.4 կվ մալուխային ելքով մոնտաժում	կոմպ	1.00	58,815	58,815
44	Գեներատոր HFW-200 T5	կոմպ	1.00		
	Ընդամենը 3 բաժնով				**58,815**
45	**Բաժին 4 Ջրամատակարարում և կոյուղի**				
	Սառը ջրամատակարարում				
46	PPR de 32 PN 10 պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում (Փրփրառետինե մեկուսիչ շերտով)	մ	16.0000	4168	66,694
47	PPR de 25 PN 10 պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում (Փրփրառետինե մեկուսիչ շերտով)	մ	30.000	3866	115,969
48	PPR de 20 PN 10 պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում (Փրփրառետինե մեկուսիչ շերտով)	մ	53.0000	4104	217,518
49	Գնդիկավոր փական dn20, PN 10	հատ	2	4974	9,948
50	Գնդիկավոր փական dn15, PN 10	հատ	3.00	4974	14,922
51	Գնդիկավոր փական dn 15 (Arko), PN 10	հատ	32.000	4974	159,169
52	PPR պոլիպրոպիլենե ձևավոր մասեր de 32, PN 10	հատ	15.000	376	5,643
53	PPR պոլիպրոպիլենե ձևավոր մասեր de 20-25, PN 10	հատ	85.000	305	25,952
54	PPR անցում de 20 / DN 15, PN 10 ներսի պարուրակային միացմամբ (ուղիղ և 90°)	հատ	36.000	171	6,154
55	PPR անցում de 20 / DN 20, PN 10 ներսի պարուրակային միացմամբ	հատ	2.00	171	342
56	Ճկուն խողովակ dn 15 զուգարանակոնքերի և լվացարանների միացման համար L=40սմ	հատ	36	1034	37,213
57	Ճկուն խողովակ dn 20 ջրատաքացուցիչի միացման համար L=60սմ	հատ	2.00	1181	2,363
58	Կերամիկական զուգարանակոնք	լրակազմ	19.000	56883	1,080,783
59	Կերամիկական լվացարան	հատ	11.00	23437	257,807
60	Խոհանոցային լվացարան	հատ	2.00	22041	44,083
61	Ծորակ՝ չժանգոտող մետաղից, սառը ջրի համար	հատ	7.00	14453	101,169
62	Ծորակ՝ չժանգոտող մետաղից, սառը և տաք ջրի համար	հատ	6.00	14453	86,716
63	Էլեկտրական ջրատաքացուցիչ բաք 100լ, 7 Կվտ,	հատ	2.00	109253	218,506
64	Ամրակալներ d=32 մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	8.000	74	591
65	Ամրակալներ d=25 մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	15.00	74	1,108
66	Ամրակալներ d=20 մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	27	74	1,994
67	Համակարգի հիդրավլիկական փորձարկում, ախտահանում և լվացում	100մ	0.99	10646	10,539
68	de 100մմ պլաստմասե ճկվող խողովակ (պատյան՝ հիմքի տակ)	մ	5	4127	20,633
	Տաք ջրամատակարարում				
69	PPR de 25 PN 10 պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում (Փրփրառետինե մեկուսիչ շերտով)	մ	16.00	3866	61,850

70	PPR de 20 PN 10 պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում (Փրփրառետինե մեկուսիչ շերտով)	մ	10.00	4104	41,041
71	Գնդիկավոր փական ժ20, PN 10	հատ	2.000	4974	9,948
72	Գնդիկավոր փական ժ15, PN 10	հատ	6.00	4974	29,844
73	PPR անցում de 20 / DN 20, PN 10 ներսի պարուրակային միացմամբ (ուղիղ և 90*)	հատ	30.00	305	9,160
74	PPR անցում de 20 / DN 15, PN 10 ներսի պարուրակային միացմամբ (ուղիղ և 90*)	հատ	2	171	342
75	PPR անցում de 20 / DN 15, PN 10 ներսի պարուրակային միացմամբ (ուղիղ և 90*)	հատ	6	171	1,026
76	Ճկուն խողովակ ժ 15 զուգարանակոնքերի և լվացարանների միացման համար L=40սմ	հատ	6.000	1034	6,202
77	Ճկուն խողովակ ժ 20 ջրատաքացուցիչի միացման համար L=60սմ	հատ	2.000	1181	2,363
78	Ամրակալներ d=25 մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	8.0	74	591
79	Ամրակալներ d=20 մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	5.00	74	369
80	Համակարգի հիդրավլիկական փորձարկում, ախտահանում և լվացում	100մ	0.26	10646	2,768
	Հակահրդեհային ջրամատակարարման աշխատանքներ				
81	Պողպատե խողովակ 76x3	մ	2	4411	8,822
82	Պողպատե խողովակ 57x3	մ	2.000	2675	5,349
83	Կցաշուրթի պոլիէթիլենե ներդիր de 75 PND	հատ	2.0	310	620
84	Պողպատե կցաշուրթ ժ65	հատ	2.0	11924	23,849
85	Պողպատե եռաբաշխիչ 76/57	հատ	2.0	5121	10,241
86	Պողպատե անկյունակ 57x3, 90*	հատ	2.0	2953	5,907
87	Պողպատե խողովակ 57x3-ի վրա պարուրակի կտրում	հատ	2	1284	2,569
88	Հրշեջ պահարան՝ բաց տիպի, ШПК-315 (Հրշեջ փական DN 50, PN16. Հրշեջ գլխիկ ГМ-50 DN 50, PN16 . Հրշեջ խողովակ երկկողմանի ГР-50 գլխիկներով՝ L=20մ. Հրշեջ փողակ РСП-50 А)	հատ	4.000	88030	352,119
89	Խողովակների և կցամասերի հակակոռոզիոն ներկում	100մ2	0.02	150035	3,001
90	Համակարգի հիդրավլիկական փորձարկում	100մ	0.04	10646	426
	Ներքին կոյուղու աշխատանքներ				
91	Կոյուղու պոլիէթիլենային խողովակ ռենինե սեղմիչ օղակներով PVC de110x3.2	մ	79.000	2806	221,708
92	Կոյուղու պոլիէթիլենային խողովակ ռենինե սեղմիչ օղակներով PVC de50x1.8	մ	42.000	1650	69,306
93	Եռաբաշխիչ 110x110, 90 աստիճան	հատ	19.000	778	14,786
94	Եռաբաշխիչ 110x110, 135 աստիճան	հատ	7.0	886	6,202
95	Եռաբաշխիչ 110x50, 90 աստիճան	հատ	6.0000	1170	7,017
96	Եռաբաշխիչ 50x50, 90 աստիճան	հատ	6.0	1170	7,017

97	Անկյուն 110, 135 աստիճան	հատ	21.000	1691	35,507
98	Անկյուն 50, 90 աստիճան	հատ	16	173	2,764
99	Անկյուն 50, 135 աստիճան	հատ	5.000	173	864
100	Ստուգիչ ö110	հատ	7.000	1911	13,379
101	Խցափակիչ 110	լրակազմ	7.000	2469	17,286
102	Ճկուն միացում զուգարանակոնքի համար 110 մմ	հատ	19.000	1328	25,235
103	Ճկուն միացում լվացարանի և լոգատաշտակի համար 50 մմ	հատ	19.000	886	16,834
104	Արծնապատ հոսակ 50 մմ	լրակազմ	11.000	2469	27,164
105	Մետաղական թասակ	լրակազմ	7.000	6079	42,550
106	Ամրակալեր 110 մմ խողովակների միացման համար	հատ	48.0	103	4,962
107	Ամրակալեր 50 մմ խողովակների միացման համար	հատ	33.000	89	2,924
108	Համակարգի հիդրավլիկ փորձարկում	100մ	1.210	10646	12,881
	Ընդամենը 4 բաժնով				**3,592,607**
	Ընդամենը շին.մոնտաժային աշխատանքներ 1-4 բաժիններով				**186,576,765**
	Բաժին 5 Սարքավորումներ				
109	Տրանսֆորմատորային ենթակայան (ԼՏԵ ((ԿՏՊ) 250կՎ) մալուխային մուտքով և 0.4 կՎ մալուխային ելքով	կոմպ	1.0000	5648475	5,648,475
110	Գեներատոր HFW-200 T5	կոմպ	1.0000	16625700	16,625,700
	Ընդամենը սարքավորումներ				**22,274,175**
	Ընդամենը շին.մոնտաժային աշխատանքներ և սարքավորումներ				**208,850,940**
	ԱԱՀ 20 %				**41,770,188**
	Ընդամենը				**250,621,128**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնքի Մարգարա գյուղի Արմավիր-Մարգարա մայրուղի 12, Մայրուղի 12/1 և Մարգարա մայրուղի 12/2 հասցեներում գտնվող հողամասեր հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030526
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ
ք. Երևան, Արցախի պողոտա 55
«Արմսվիսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2500010982360100
ՀՎՀՀ 00403814
«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ-ի տնօրեն՝

Ա.Կարապետյան

(ստորագրություն)

Կ.Տ

«20» հունվար 2023թ. Հավելված թիվ 2
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅԱՑԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՄԱՐԳԱՐԱ» ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (1-ԻՆ ՓՈՒԼ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանջին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«Մարգարա» մաքսային կետի կառուցման (1-ին փուլ) աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	90 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030526
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ
ք. Երևան, Արցախի պողոտա 55
«Արմսվիսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2500010982360100
ՀՎՀՀ 00403814
«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ-ի տնօրեն՝

Ա.Կարապետյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2.1
«20» հունվար 2023թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի

«Մարգարա» մաքսային կետի կառուցման (1-ին փուլ) աշխատանքների նախագծով նախատեսված սարքերի. սարքավորումների նվազագույն երաշխիքային ժամկետները		
Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ 2 տարի		
N/N	ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
	Նոր կառուցվող անցակետի ելքի սպասարկման սրահ	
1	Տրանսֆորմատորային ենթակայան (ԼՏԵ ((КТП) 250կՎ) մալուխային մուտքով և 0.4 կվ մալուխային ելքով	5 Տարի
2	Գեներատոր	5 Տարի

<<Մարգարա>> մաքսային կետի կառուցման նախագծով նախատեսված սարքերի. սարքավորումների տեխնիկական բնութագրերը

Հ/հ	Առաջարկվող սարքերի և սարքավորումների					
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մոդելը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը	երաշխիքային ժամկետները
1	Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան	ТМГ	250/10/0.4	Մետալուրգ ՓԲԸ	Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան (ԼՏԵ ((КТП) 250կՎ) Բարձր լարում 10 կվ մալուխային մուտքով և ցածր լարումը 0.4 կվ մալուխային ելքով	5 Տարի
	Գեներատոր	HIMOINSA A YANMAR COMPANY	HFW-200 T5	HIMOINSA SL	Նոմինալ հզորությունը ելքի վրա 176.5 կվտ, շարժիչի տիպը- քառատակտ,դիզելային, սառեցման համակարգը- ջուր+գլիկոլ, սեղմման գործակիծ-17.5:1, սառեցնող հեղուկի ընդհանուր տարողությունը 25.5 լ, յուղի ընդհանուր տարողությունը-17.2 լ	5 Տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030526
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ
ք. Երևան, Արցախի պողոտա 55
«Արմսվիսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2500010982360100
ՀՎՀՀ 00403814
«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ-ի տնօրեն՝

Ա.Կարապետյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«20» հունվար 2023թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԱԾՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Աշխատանքի															
	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2023թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	5112	45451700/4	«Մարգարա» մաքսային կետի կառուցման (1-ին փուլ) աշխատանքներ						146 863 981	250 621 128	250 621 128	250 621 128	250 621 128	250 621 128	250 621 128	**250 621 128**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030526
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ
ք. Երևան, Արցախի պողոտա 55
«Արմավիսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2500010982360100
ՀՎՀՀ 00403814
«ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ-ի տնօրեն՝

Ա.Գարեգնյան

(ստորագրություն)
Կ.Տ

«20» հունվար 2023թ. Հավելված թիվ 4
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«20» հունվար 2023թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-23/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն